



## ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Գաղութումս գործող միութիւնների հետ հանդիպումներ եւ այցելութիւններ ունենալու Հ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի Հանրային կապի յանձնախմբի երկրորդ միջոցառումը տեղի ունեցաւ Վասպուրականի հայենակցական միութեան Լոս Անջելոսի մասնաճիւղի վարչութեան ներկայացուցիչների հետ, Չորեքշաբթի, Յուլիսի 13-ի երեկոյեան ժամը 7-ին՝ Գլենդէլի Սբ. Աստուածածին եկեղեցոյ ժողովասրահում: Հանդիպմանը մասնակցում էին Հանրային կապի յանձնախմբի ատենապետ՝ Րաֆֆի Կիրիսեանը, յանձնախմբի անդամներ՝ Յարութ Մատենեանը, Վիգէն Հապոյեանը, Սիրան Արթինեանը, Անդրանիկ Աբրահամեանը, գրասենեակի պատասխանատու Սարո Նազարեանը, ինչպէս նաեւ Վասպուրականի հայենակցական միութեան լոսանջելոսեան մասնաճիւղի վարչութեան ատենապետ՝ Մուրադ Լուսինեանը, փոխատենապետ՝ Պետրոս Թովմասեանէ եւ ատենադպիր՝ Հերմինէ Պօստանեանը:

Շուրջ մէկ ժամ տեւած հանդիպման ընթացքում խօսուեց միութեան պատմականի, անցեալի իրագործումների եւ ներկայի ծրագրերի ու գործունէութեան մասին:

Վասպուրականի հայենակցական միութիւնը հիմնուել է 1931 թուականի Ապրիլի 30-ին Միչիգանի նահանգի Դիտրոյտ քաղաքի «Ազատամարտ» հայկական ակումբում, նախ՝ «Համա-Վասպուրականի հայրենակցական միութիւն» անուամբ եւ ապա անցնող ութ տասնամեակներին մի քանի անգամ փոփոխութիւններ կրելով, հաստատուել է ներկայիս՝ «Վասպուրականի հայենակցական միութիւն» անուամբ:

Միութեան հիմնական նպատակն է ի մի հաւաքել ու համախմբել վասպուրականցի գաղթականներին, ովքեր դեռ 1890-ական թուականներից սկսեալ բնակութիւն էին հաստատել Միացեալ Նահանգների արեւելեան շրջանում, իրենց հետ այս նոր աշխարհը բերելով Վասպուրականի տարբեր գաւառների ու գիւղերի հայրենաբոյր արանդութիւններն ու սովորութիւնները: Չյարելով քաղաքական որեւէ հոսանքի կամ կազմակերպութեան, միութիւնը շարունակում է մնալ համայն վասպուրանկացիներին պատկան կառոյցը, որն ունի մասնաճիւղեր Միացեալ Նահանգների հայաստան շրջաններում, այդ թւում՝ Լոս Անջելոսի հայկական գաղթօջախում:

Միութեան բոլոր մասնաճիւղերը երկու տարին մէկ ունենում են պատգամաւորական ժողով, ուր քննարկում են միութեան երկամեայ աշխատանքները եւ առաջարկներ ու որոշումներ են ընդունում յաջորդ երկու տարիների համար: Պատգամաւորական ժողովի արարտին ընտրում է միութեան կենտրոնական վարչութիւնը, որը վերահսկում եւ համադրում է մասնաճիւղերի աշխատանքներն ու պարտաւորութիւնները:

Վասպուրականի հայենակցական միութիւնը անցնող 80 տարիների ընթացքում աւելի քան երեք միլիոն դոլլարի օգնութիւն է կատարել Բէյրութի Համազգային ճեմարանին, Իրաքի գաղթական վասպուրականցիների հիմնած Հաւրէզ գիւղին, 1946-ի Սիրիայի ներգաղթի յանձնախմբի աշխատանքներին, Խրիմեան սաների ֆոնդին (որի արդիւնքում՝ աւելի քան 100 վասպուրականցի երեխաներ ստացել են հայկական բարձրակարգ կրթութիւն), Ջաւախքի առաջնորդարանին, 1990 թուկանից ի վեր՝ Հայաստանի որբերի հիմնադրամին, ինչպէս նաեւ Միացեալ Նահանգներում գործող հայկական վարժարաններին եւ Հայ Դատի Յանձնախմբին:

Վերջին վեց տասնամեակներին միութիւնը հրատարակու է «Վարագ» պարբերականը, ուր տեղ են գտնում յօդուածներ ու ուսումնասիրութիւններ՝ երբեմնի հայաշունչ Վասպուրականի փառահեղ անցեալի մասին:

Միութեան լոսանջելոսեան մասնաճիւղը իր շուրջ 65 անդամ-ուիներով իր գործուն է ծաւալուն մասնակցութիւնն է բերում միութեան նպատակների ու աշխատանքների իրագործմանը: Մասնաճիւղն ունի 7 անդամներից բաղկացած իր վարչութիւնը եւ մշակութային, ընկերային ու յարաբերական յանձնախմբերը, որոնց ծրագրերի ու աշխատանքների հաղորդագրութիւնները արտացոլում են մասնաճիւղի «Արծիւ Վասպուրականի» լրատուի էջերում: Ինչպէս նշուած է լրատուի 2011-ի Յունիսեան համարում,- մէջբերում ենք,- *«Հրատարակութեան նպատակն է ջանալ միջոց մը հաստատել մասնաճիւղի անդամ-ուիներէն մէկ ընտանիք կազմել, սերտ յարաբերութիւններով եւ բոլորին՝ իրենց ընտանեկան պարագաներուն հետ միասին, ծանուցումներ, տեղեկութիւններ, եւ նոր բանաձեւումներ առաքելու, յոյս ու հաւատք սփռելու մեր նորակերտ ապագայի մասին, ի մասնաւորի իրենց բնօրրանէն հեռու՝ հայրենի հողէն ու ջուրէն զրկուած, վասպուրականցիի իսկական կերպարը կորցրած մեր շառաւիղներուն եւ մատաղ սերունդի հոգիներուն մէջ վերականգնել, պահպանել եւ ամրապնդել մեր ժողովուրդի դարաւոր պատմութիւնը, մշակութային արժէքները եւ տոհմիկ աւանդութիւններն ու սովորութիւնները: Աւելին՝ ներկայ ծանր պայմաններու մէջ, սերմանել, աճեցնել եւ ամուր կառչած պահել բոլորին իրենց ազգային ժառանգութիւններուն, յատկապէս հայրենի գաւթուած տարածքներուն վերատիրացման սուրբ առաքելութեանը եւ այդ նպատակին համար մարտնչող եւ նահատակուած մեր հերոս պապերու սրբազան պատգամին»:*

Միութիւնը այս տարի նշում է իր հիմնադրման 80-ամեակը եւ արդէն իսկ նախապատրաստական աշխատանքներ են ձեռնարկում այդ ուղղութեամբ:

Այս լուրը տրամադրուած է  
ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի  
Կեդրոնական Կոմիտէի  
Հանրային Կապի Գրասենեակի կողմից  
ARF Central Committee  
Office of Public Relations  
Contact Person: Saro Nazarian  
[PublicRelations@ARF1890.com](mailto:PublicRelations@ARF1890.com)  
Tel: (818) 243-7059  
Fax: (818) 243-1467